

ՀՏԴ 7.072.2

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԿԵՆԱՑ ԾԱՌԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ
Պողոսյան Գ. Ռ.**

Զեկուցումը նվիրված է Վանի թագավորության (Ուրարտու) արվեստում մեծ տարածում գտած կենաց ծառի պատկերագրության ու խորհրդաբանության վերլուծությանը: Վանի թագավորության արվեստի տարբեր ճյուղերում ներկայացված կենաց ծառերի կառուցվածքը, ոճն ու պատկերման եղանակները պայմանավորված են ոչ միայն ժամանակաշրջանի գեղարվեստական կանոններով, այլև հորինվածքների պաշտամունքային գործառույթներով: Վանի թագավորությունում, ինչպես հին արևելյան այլ մշակույթներում, կենաց ծառն ունեցել է կարևոր ծիսական նշանակություն: Կենաց ծառապատկերների խորհրդաբանության և գաղափարաբանության պարզաբանմամբ հնարավոր է որոշակի պատկերացում կազմել ուրարտական կրոնական հավատալիքների վերաբերյալ:

Բանալի բառեր. կենաց ծառ, Վանի թագավորություն, պատկերագրություն, խորհրդաբանություն:

Հոդվածի նպատակն է ուրարտական պատկերագրական օրինակներով բացահայտել կենաց ծառապատկերի գաղափարական նշանակությունն ու խորհրդաբանությունը: Թեման արդիական է, քանզի ուրարտագիտության բնագավառում դեռևս բացակայում են գեղարվեստական հորինվածքներում բազմիցս հանդիպող կենաց ծառերի պատկերագրության վերաբերյալ կատարված հիմնավոր վերլուծական աշխատություններ: Ուստի սույն ուսումնասիրության շրջանակում փորձ է կատարվել արվեստաբանորեն ներկայացնել խնդիրը և տալ որոշ պարզաբանումներ:

Արվեստի տարբեր ճյուղերում հանդիպող ոճավորված կենաց ծառի մոտիվը ձևավորվել է դեռևս Միջագետքում մ.թ.ա. 4-րդ հա-

զարամյակում, իսկ 2-րդ հազարամյակում հայտնվել նաև եգիպտական և հին արևելյան այլ մշակույթներում [21, էջ 161]: Կենաց ծառի դեկորատիվ խորհրդանշանը հայտնի է դեռևս հնագույն միջագետքյան կնիքներից (ծառ, որի բունը հիմքում պսակված է եռաժանիով կամ կիսալուսնով, խաչվող ճյուղերով կենաց ծառ, որոնք ավարտվում են պտուղներով): Այս պարզ պատկերը հաճախ փոփոխվում է՝ ծառից վերածվելով պտղի, թփի և այլն: Ասուրական մ.թ.ա. 10-րդ դարի և ավելի ուշ հուշարձաններում կենաց ծառի պատկերը վերածվում է ավելի բարդ և պայմանական նշանի՝ երկու կողմերում հայելային դիրքով մարդակերպ կամ կենդանական կերպարներով [22, էջ 6]:


Վանի թագավորության արվեստում տարբեր են կենաց ծառերի կառուցվածքը, ոճն ու պատկերման եղանակները: Առավել լայն տարածում ունի կենաց ծառերի եռամաս կառուցվածքը՝ բուն, բնից դուրս եկող ճյուղեր և ճյուղերը պսակող պտուղներ կամ բուսանախշ: Երկրորդ հազարամյակի կեսերից ծառի այս տիպը՝ կոնաձև ծաղկաշղթաներով, նույն պտուղներով կամ արմավանախշերով, բնորոշվում է որպես ուշ-ասուրական մոտիվ [21, էջ 163]: Նեո-ասուրական թագավորության հզորացմանը զուգահեռ՝ այն տարածվում է ողջ Մերձավոր Արևելքում և արվեստում պահպանվում մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջ: Վանի թագավորության կենաց ծառապատկերի գաղափարական նշանակության վերաբերյալ տվյալներ միջագետքյան և ուրարտական գրավոր աղբյուրներում չեն պահպանվել: Ուրարտական արվեստի տարբեր ճյուղերում կենաց ծառը ներկայացված է կա՛մ ամբողջական ծառերի, կա՛մ աստվածությունների ձևերում պատկերված ծառի ոստերի պատկերաձևերով: Էրեբունու պալատական համալիրի որմնանկարչական հորինվածքներում ներկայացված են պտղազարդ ճյուղերով ավարտվող կամարատիպ ծառապատկերներ (**նկ. 1, 2**): Էրեբունիում հայտնաբերվել է նաև մի բեկոր, որի վրա սխեմատիկ պատկերաձևերով և կապույտ երանգավորմամբ պատկերված է իրատեսական ծառ՝ բնից ելնող ճյուղերով (**նկ. 3**):

Բնից ելնող ճյուղերով ծառի սխեմատիկ պարզունակ պատկերներն օգտագործվել են նաև ուրարտական հիերոգլիֆային գաղափարանշաններում [5, էջ 8]: Կենաց ծառի այս տեսակի նախատիպը հայկական լեռնաշխարհում կարելի է տեսնել Գեղամա մշտադալար ծառապատկերներում [5, էջ 50, աղ. 16, նկ. 1]: Ժայռանկարային կենաց

ծառերի այս պարզունակ ձևը կրկնվում է նաև Կարմիր բլուրից հայտնաբերված մի ուրարտական կնիքում [14, էջ 57, նկ. 43]:



Նկար 1



Նկար 2



Նկար 3

Որմնանկարներում պատկերված ոճավորված և դեկորատիվ գուներանգներով կենաց ծառերի ու բուսանախշերի միջոցով կարելի է որոշակի պատկերացում կազմել ուրարտացիների երևակայական պատկերացումների ու գունամտածողության վերաբերյալ: Արվեստում ծառերի պատկերագրական տիպերը ձևավորվել են հնում ծառերի մասին մարդկանց ունեցած գիտելիքներից ու տեսողական էմպիրիկ փորձառության արդյունքում: Հին արևելյան արվեստում ծառերի տարբեր ոճական առանձնահատկությունները պայմանավորված են եղել հավանաբար տարբեր ծառերի խորհրդանշական գործառույթներով: Սրբազան ծառերի վերաբերյալ հնագույն միջագետքյան պատկերացումների փաստագրում կա *«Գիլգամեշ»* դյուցազնավեպի *«Գիլգամեշը և Խուլուպպու ծառը»* վիպերգում [10, էջ 174], որտեղ մաքուր Եփրատի ափին բուսած և նրա ջրերով սնված ծառն *Ինանա* դիցուհին, արմատահան անելով, տարել և տնկել էր Ուրուքում [20, էջ 74-76]: Հայտնի է, որ հնագույն Միջագետքը

շինարարական փայտանյութ ներմուծում էր Հայկական Տավրոսի լեռնաշղթայից: Հարավային Միջագետքի ժողովուրդները ծանոթ էին միայն իրենց տարածաշրջանում աճող բարձրահասակ մի ծառատեսակին՝ արմավենուն [15, էջ 65], որի փյունիկյան տեսակը նախատիպն էր Միջագետքի կենաց ծառի [11, էջ 47]: Դրա վկայությունն են միջագետքյան արմավաճյուղ կենաց ծառապատկերները [23, էջ 154], և հավանաբար դրանց ազդեցությամբ է Վանի թագավորություն ներմուծվել արմավենու պատկերը: Հայկական լեռնաշխարհում ծառերի պաշտամունքի վկայություն է *սոսի* ծառատեսակի կիրառումը պաշտամունքային շինությունների կանաչապատման մեջ [1, էջ 510]: Հին Հայաստանում ծառերի պաշտամունքի կարևորությունն է փաստում Արմավիրում գոյություն ունեցած սոսիների սրբազան պուրակը, որտեղ ծառերի տերևների սոսափյունով գուշակություններ էին կատարվում [8, Գիրք Ա, Ի]: Ծառերի պաշտամունքը անքակտելիորեն կապված է եղել աստվածությունների հետ, քանզի Խալդի աստվածության խորհրդանշաններից մեկը ուրարտական պատկերագրության մեջ համարվում էր հենց կենաց ծառի ճյուղը կամ տերևը [12, էջ 194], և միգուցե հենց այդ ծառերի տերևներով գուշակության ավանդույթն է փոխանցվել հետուրարտական հասարակարգին: Ծառերի պաշտամունքը կարևոր նշանակություն է ունեցել նաև Եվրոպայում: Ուշագրավ է, որ գերմանական ցեղերի մոտ *տաճար* նշանակող բառերը, ըստ գերմանացի նշանավոր բանասեր, լեզվաբան Յ. Գրիմի ենթադրության, կապված են եղել անտառները որպես սրբավայր համարելու հնագույն ավանդույթի հետ [17, էջ 111]: Որոշ եվրոպական ժողովուրդների մոտ եղել է ծառերի պաշտամունք, իսկ **սրբավայր** նշանակող բառն իր ծագմամբ և նշանակությամբ համարժեք է լատիներեն *«nemus»*՝ **ծառերի պուրակ** նշանակող բառին: Գերմանացիների մոտ սրբազան պուրակների և ծառերի պաշտամունքը չի անհետացել նաև իրենց սերունդների մոտ [17, էջ 111]: Ուսասլայում, օրինակ, գոյություն է ունեցել սրբազան պուրակ, ուր ծառերը համարվել են աստվածային [17, էջ 111]: Ծառերի պաշտամունք գոյություն է ունեցել նաև սլավոնական հեթանոսների մոտ, ուր սրբազան է համարվել անգամ ծառի ճյուղը, որն արգելված է եղել պոկել: Ծառերի պաշտամունքը մեծ տարածում է ունեցել նաև Հունաստանում և Իտալիայում: Եվրոպական որոշ ցեղերի մոտ հնում գոյություն է ունեցել սրբազան ծառի մոտ քրմերի կողմից ծիսական արարողություններ և զոհաբերություն կատարելու սովորույթը: Ծառերի արմատները ծառայել են որպես ամբիոն ծիսական

արարողության համար: Չի բացառվում, որ նման երևույթ հավանաբար գոյություն է ունեցել նաև Վանի թագավորությունում: Ուրարտական հորինվածքներում սրբություններով շրջապատված ծառը ներկայացվում է աստվածությունների կողմից սրբազան բեղմնավորման խորհրդանշական արարողակարգում: Ծառը՝ որպես պտղաբերող էակ, ինչպես կինն է և մայրը, պաշտվում է արևելյան Աֆրկայի *Վանիկա* ցեղում, ուր արգելված է կտրել ծառերը, քանզի ծառը կապվում է մայրության հետ, նրանց կյանք ու սնունդ պարզևող էակն է [17, էջ 112]: Ծառի և կանացի պտղաբերության միջև այս խորհրդանշական կապը Վանի թագավորությունում փաստում են նաև Կարմիր բլուրից հայտնաբերված նախաուրարտական կանացի կուռք-արձանիկները, որոնց մակերեսը հարդարված է սխեմատիկ բուսազարդով [13, էջ 115]: Այս երևույթն է թերևս ընկած Թոփրակ-կալեից գտնված մի ոսկյա մեդալիոնի գեղարվեստական հարդարանքում՝ Ուարուբաինի աստվածուհու ձեռքի ճյուղի պատկերի խորհրդաբանական հիմքում (նկ. 4):



Նկար 4

Հ. Մարտիրոսյանի կարծիքով Ուարուբաինին մեծ մայր, նախամայր աստվածուհի էր, Խալդիի և Թեյշեբայի մայրը, ինչպես երկնքի ու բուսականության հետ կապված արևելյան նախամայր աստվածուհիները [4, էջ 77]: Պտղաբերության և բուսականության աստվածուհիների արձանիկները հնագույն տարբեր մշակույթներում զարդարվում էին բուսական զարդամոտիվներով, դրվում հացահատիկի հորերի կամ ջրավազանների մոտ և օգտագործվում երկրագործական, բնության զարթոնքի տոնական ծիսակատարությունների ժամանակ: Որոշ պահպանված տեղեկությունների համաձայն՝ հեթանոս հայերը Անահիտ աստվածուհուն էին նվիրաբերում ծառերի դալար ճյուղեր [2, էջ 35-36], որոնք համադրելի են ուրարտական արվեստի տարբեր նմուշներում Ուարուբաինիի ձեռքում պատկերված ոստերի հետ:

Այստեղից հետևում է, որ որոշ հորինվածքներում ծառայատկերի գաղափարը կապվում է իգական սեռի պտղաբերական գործառույթի հետ և կարելի է եզրակացնել, թե ուրարտական պատկերագրության մեջ ինչու է հենց արական սեռի կերպարների կողմից իրականացվում ծառի սրբազան բեղմնավորման խորհրդանշական գործողությունը:

Որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ Ասորեստանում և Բաբելոնում սրբազան ծառի պաշտամունքը կապված է եղել դիցարանի գերագույն աստվածության, իսկ աքքադական մշակույթում՝ *Էա* աստվածության և սրբազան *մայրի* ծառի հետ, որի միջուկում գրվում էր աստվածության անունը [22, էջ 6-7]: Հին եգիպտական դիցարանության մեջ, օրինակ, *Օսիրիսի* պաշտամունքը կապվում էր ծառի, իսկ հունականում՝ *Դիոնիսիոսի* խաղողի որթի հետ: Վանի թագավորությունում նմանօրինակ ավանդույթի խոսուն ապացույցն են Էրեբունու կարասային սենյակում պահպանված խաղողի ողկույզների և որթերի պատկերներով որմնանկարի բեկորները [18, էջ 65]: Ուրարտացիների՝ խաղողի հանդեպ ունեցած վերաբերմունքը արտահայտված է նաև որոշ երկրագործական ձեսերի՝ խաղողի որթի էտման, խաղողուտի խչմարման և խաղողի բերքահավաքի վերաբերյալ հիշատակություններում [3, էջ 76-78]: Այս առիթով ուշագրավ է այն փաստը, որ զարդարվեստում կենաց ծառի գաղափարը կարող է արտահայտված լինել ոչ միայն ծառի պատկերով, այլ նաև ոճավորված բուսանախշերի տեսքով [4, էջ 2]: Կարելի է եզրակացնել, որ երկրագործական գլխավոր խորհրդանիշ համարվող ծառը հանդիսացել է մեռնող ու հարություն առնող կամ սիրո ու պտղաբերության աստվածությունների խորհրդանիշ [7, էջ 212]՝ մարմնավորելով նաև բնության կարևոր երևույթները: Ոճավորված կենաց ծառերը կամ առհասարակ ծաղկային զարդամոտիվները մշտապես ասոցացվել են աճի և պտղաբերության գաղափարի հետ, քանի որ ծաղկազարդերի պատկերմամբ (ընդգծված սերմ, հատիկ, վարսանդա-պտղային օրգաններ) մարդիկ տարբեր դարերում ակնկալել են ծաղկից սպասվող պտուղ [6, էջ 5]: Դա է փաստում ոճավորված ծառայատկերներում ակնհայտորեն ընդգծված կյանքի զարգացող գիծը՝ ծնունդ, աճ, պտղաբերություն [16, էջ 396]: Կարմիր բլուրում հայտնաբերված բրոնզյա մի գոտու երկայնական պատկերաշարում կենաց ծառի ընդհանրացված գաղափարն արտահայտված է ոճավորված բուսազարդերով, որոնք սահմանազատում են գերագույն աստվածությունների հաջորդաբար դասավորված պատկերները (Խալդին՝ առյուծի, իսկ Թեյշեբան՝ ցլի վրա)

ընդգծելով աստվածություն-ծառ-պտղաբերություն խորհրդանշական կապը (*նկ. 5*):



Նկար 5

Այսպիսով, ստացվում է, որ ուրարտական արվեստում կենաց ծառապատկերի և ծիսական բեղմնավորման ավանդույթը ևս կարող էր կապված լինել դիցարանի գլխավոր աստվածությունների հետ: Դրա վառ վկայությունն է Այանիսի տաճարում *Խալդի* աստվածությանը կենաց ծառեր նվիրաբերելու ծիսակատարությունների ավանդույթը [19, էջ 65]: Փաստորեն ուրարտական մշակույթում կենաց ծառի ճյուղին տրվել է կարևոր ծիսական նշանակություն և գեղարվեստական հորինվածքներում տարբեր խորհրդաբանական գաղափարաբանությամբ պատկերվել թե՛ արական և թե՛ իգական աստվածությունների ձեռքում:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ կենաց ծառապատկերներում պտղաբերության գաղափարն ասոցացվում է նաև կյանքի չորս փուլերի հետ՝ կյանք, աճ, դեգրադացիա, մահ [13, էջ 396]: Դիցաբանական և կրոնական համակարգերում կյանքի աճն ընդգծվում է ծառի ծաղկմամբ և պտուղների հասունացմամբ՝ իր մեջ կրելով կյանքի ու անմահության գաղտնիքը: Որոշ մշակույթներում կենաց ծառը հաճախ ներկայացվում է կենդանու հետ համատեղ՝ որպես պտղաբերող ուժի կրողներ [16, էջ 397]: Ուրարտական պատկերագրության մեջ այդ պտղաբերող ուժի կրողները հանդիսանում են արական սեռի աստվածությունները, որոնք հավանաբար ծնունդ տվող կնոջ ու ծառի միասնական գաղափարը կազմող սրբություններ են:

**ИКОНОГРАФИЯ И СИМВОЛИКА ДРЕВА ЖИЗНИ В ИСКУССТВЕ
ВАНСКОГО ЦАРСТВА
Погосян Г. Р.**

Статья посвящена анализу иконографии и символики древа жизни в искусстве Ванского царства. Стиль и изобразительные методы древа жизни в разных видах искусства обосновываются не только

художественными канонами эпохи, но также культовой функцией композиций. В Ванском искусстве, как и в других древних культурах, древо жизни имело важное ритуальное значение. Выяснение символического значения изображения древа жизни может дать некоторое представление об урартских религиозных верованиях.

Ключевые слова: древо жизни, Ванское царство, иконография, символика.

ICONOGRAPHY AND SYMBOLISM OF THE TREE OF LIFE IN THE ART OF VAN KINGDOM

Poghosyan G. R.

The article is devoted to the analysis of the iconography and symbolism of the Tree of life in the art of Van kingdom. The style and depiction methods of the Tree of life in various types of art are based not only on the artistic canons of the time, but also on the cult function of compositions. In the Van kingdom, like other ancient cultures, the Tree of life had an important ritual significance. The discovery of the symbolical meanings of the images of the Tree of life, can give some insight into Urartian religious beliefs.

Keywords: Tree of life, Van kingdom, iconography, symbolism.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարսեղյան Ս. Գ. Սոսի: Հայկական սովետական հանրագիտարան: №10: Երևան: «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն: 1984: 510 էջ:
2. Հարությունյան Ս. Բ. Հին հայոց հավատալիքները: կրոնը: պաշտամունքն ու դիցարանը: Ընդհանուր ակնարկ: Երևան: «Մուղնի»: 2001: 57 էջ:
3. Հմայակյան Ս. Գ. Վանի թագավորության պետական կրոնը: Երևան: Հայաստանի ԳԱ հրատարակչություն: 1990: 160 [32] էջ:
4. Մարտիրոսյան Հ. Ա. Գիտությունն սկսվում է նախնադարում: Երևան: Սովետական գրող: 1978: 205 էջ:
5. Մարտիրոսյան Հ. Ա. Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1973: 81 էջ:

6. Մնացականյան Ա. Շ. Հայկական գարդարվեստ: Հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1955: 658 էջ:
7. Մնացականյան Ա. Շ. Վերստին Մուսասիրի տաճարի ճակտոնի խորհրդանշանի մասին //Պատմաբանասիրական հանդես: 1977: №4: 201-213 էջ:
8. Մովսես Խորենացի Հայոց պատմություն (թարգմ. և ներած.՝ Մալխասյանց Ս.): Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1997: 552 էջ:
9. Մուղղուսյան Զ. Հայկական նախամայր աստվածության և Խալդիի հարցի շուրջ // ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների: 1985: № 7: 61-71 էջ:
10. Պետրոսյան Ս. Գ. «Գիլգամեշը և խուլուպու ծառը» վիպերգի հնդեվրոպական-հայկական բաղադրատարրը //Պատմաբանասիրական հանդես: 2008: №3: 172-184 էջ:
11. Авдиев В. И. История древнего Востока. Ленинград. Госполитиздат. 1953. 759 с.
12. Дьяконов И. М. К вопросу о символе Халди //Древний Восток. 4. 1983. С. 190-194.
13. Мартиросян А. А. Идолы из раскопок Кармир-Блур //Պատմաբանասիրական հանդես: 1958: № 2: С. 114-139.
14. Пиотровский Б. Б. Кармир-Блур III: Результаты работ археологической экспедиции института истории Академии Наук Армянской ССР и государственного Эрмитажа. 1951-1953гг. Ереван. 1955. 74 [16] с.
15. Струве В. В. История древнего Востока. Ленинград. Госполитиздат. 1941. 483 с.
16. Топоров В. Н. Древо жизни //Мифы народов мира. Энциклопедия (Главный редактор С. Токарев). Том 1. Москва. «Советская энциклопедия». 1991. С. 396-398.
17. Фрэзер Д. Д. Золотая ветвь: Исследование магии и религии (Пер. с англ. М. Рыклина). Москва. Политиздат. 1983. 703 с.
18. Ходжаш С. И., Трухтанова Н. С., Оганесян К. Л. Эребуни: Памятник Урартского зодчества VIII-VI в. до н.э. [Архитектура, монументальные росписи, художественное ремесло]. Москва. «Искусство». 1979. 168 с.

19. Batmaz A. A new ceremonial practice at Ayanis fortress: The Urartian Sacred Tree Ritual on the Eastern Shore of Lake Van //Journal of Near Eastern studies. Volume 72. No 1. April 2013. P. 65-83.
20. Kramer N. Gilgameš and the Huluppu-Tree //Assyriological Studies. No.10. 1938. P. 1-64.
21. Parpola S. The Assyrian Tree of Life: Tracing the Origins of Jewish Monotheism and Greek Philosophy //Journal of Near Eastern Studies. 1993. Volume 52. No. 3. P. 161-208.
22. Philpot J. The Sacred Tree or the Tree in Religion and Myth. New York. 1897. 237 p.
23. Tallay O. The Triumph of the Symbol: Pictorial Representation of Deities in Mesopotamia and the Biblical Image Ban. Friebourg. Switzerland. 2005. 308 p.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պողոսյան Գ. Ռ. – ասպիրանտ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Էլ. փոստ՝ g.poghosyan87@mail.ru

Տրվել է խմբագրություն 23.07.2019